ՀՏԴ 656.078:656.7 (479.25)

Կ.Մ. ԻԳԻԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Դիտարկվում են Հայաստանի օդային տրանսպորտի ենթակառուցվածքների շահագործման առկա վիճակը և զարգացման հեռանկարները: Ներկայացված են ՀՀ օդային տրանսպորտի ենթակառուցվածքների շահագործման, ֆինանսական ներդրումների, անվտանգության և որակի ցուցանիշները:

Առանցքային բառեր. օդային տրանսպորտ, ավիաընկերություններ, օդանավակայաններ, նավիգացիոն ծառայություն, ենթակառուցվածքներ:

Ներածություն: Ժամանակակից աշխարհին բնորոշ աշխարհաքաղաքական խորացող անկայունությունը, աշխարհակարգի և միջազգային անվտանգության ոլորտում արդեն իսկ ակհայտ դարձած անորոշություններն ու լարվածությունները, բնականաբար, ավելի են սրում Հայաստանի Հանարապետության արտաքին անվտանգության սպառնալիքները (նկ.1)՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ Հայաստանի Հանարպետությունը դեպի ծով ելք չունի և պաշտպանված չէ հարևան երկրների սոցիալ-տնտեսական, քաղաքական և ռազմական իրավիճակներից [1]:



Նկ. 1. ՀՀ օդային տրանսպորտի ենթակառուցվածքների զարգացմանը խոչընդոտող արտաքին և ներքին իրադարձությունների էվոլյուցիան 1991 - 2024թթ. [2]

Տրանսպորտի բնագավառում իրականացվող կառավարման բարեփոխումներն ուղղված են տրանսպորտի բնագավառի շուկայի կարգավորմանը, օրենսդրական բարեփոխումներին և ոլորտի կայուն զարգացմանը [3]:

Օդային տրանսպորտի ոլորտի ինստիտուցիոնալ շրջանակը բնութագրվում է քաղաքացիական ավիացիայի կարգավորման և օդային տրանսպորտի ենթակառուցվածքների շահագործմամբ (նկ.2) [4]:



Նկ. 2. Հայաստանի օդային տրանսպորտի համալիրի կառուցվածքը [4]

Ուսումնասիրելով օդային տրանսպորտի ենթակառուցվածքների սեփականության կառուցվածքը ՀՀ-ում և ԵՄ երկրների միջազգային փորձը՝ պարզ է դառնում, որ Հայաստանում և ԵՄ 28 երկրներում ավիաընկերությունները գերիշխում են մասնավոր հատվածում: Օդանավակայանների և նավիգացիոն ծառայությունների սեփականության կառուցվածքը բերված է աղյուսակում [5]:

Աղյուսակ

Օդային տրանսպորտի ենթակառուցվածքների սեփականության կառուցվածքը ՀՀ և ԵՄ երկրներում [6,7,8]

Ենթակառուցվածքներ	Հայաստան	ԵՄ 28 օդանավակայաններ		
Ավիաընկերություններ	Մասնավոր	Մասնավոր		
Օդանավակայաններ	Մասնավոր	Պետական	Պետական-մասնավոր	Մասնավոր
		189	106	60
Նավիգացիոն ծառայություններ	Պետական	Պետական		

ԵՄ-ն հրապարակել է այն ավիաընկերությունների թարմացված ցուցակը, որոնք համարվում են ոչ անվտանգ, և արգելված են թռիչքները ԵՄ-ում: 13.12.2024թ. դրությամբ ՀՀ առկա 9 ավիաընկերություններից EASA-ն եվրոպական հանձնաժողովի կողմից արգելված է թռիչքներ կատարել ԵՄ-ում, որոնք հավաստագրված են ՀՀ կարգավորող մարմնի կողմից (նկ.3) [9]:



Նկ. 3. Անվտանգության աուդիտի արդյունքները ՀՀ-ում 2024թ. [10]

Եվրամիության միասնական ավիացիոն գոտու մասին 2021թ. ընդունված համաձայնագիրը կարևոր ազդեցություն կունենա ՀՀ ավիացիոն շուկայի ընդլայման վրա՝ ԵՄ 28 անդամ պետությունների հետ փոխադարձաբար ազատականացնելով շուկայի սպասարկման պայմանները և օդային տրանսպորտի մի շարք ոլորտներում ներդնելով արդյունավետորեն կիրառվող եվրոպական չափանիշները:

ԵՄ-ի հետ կնքված համակողմանի ավիացիոն համաձայնագրերի նպատակն է զարգացնել Եվրոպայի միջազգային կապերը, ապահովել բարձր որակի ծառայությունների մատուցումը և խթանել միջազգային մրցունակությունը ԵՄ ոլորտում հատկապես օդային տրանսպորտի ենթակառուցվածքների զարգացվածության ուղղությամբ [11]:

Ներկայումս ՀՀ-ը օդային հաղորդակցությունների համաձայնագրերը կազմում են 41, օդային ծառայությունների համաձայնագրերի քանակը՝ 25:

ՀՀ-ում գրանցված ավիաընկերություններից թռիչքներ են իրականացնում Ֆլայուան Արմենիան, Հայկական ավիաուղիները և Շիրակ ավիան հետևյալ ինքնաթիռներով՝ Airbus A320, Airbus A319 և Բոինգ 737 օդանավերով, որոնք թռիչքներ են իրականացնում ՌԴ, Վրաստան, Իրան, Եգիպտոս, Մոլդովա, Կիպրոս ուղղություններով (նկ.4) [13]:



Նկ.4. ՀՀ Օդային տրանսպորտի ենթակառուցվածքների զարգացածությունը 2024թ. [12]

ՀՀ Կառավարության կողմից ընդունված «բաց երկնքի» քաղաքականությունը հանգեցրել է ուղևորահոսքի աճին, և ակնկալվում է, որ ուղևորահոսքը կշարունակի աճել հաջորդ տարիներին: ՈՒստի անհրաժեշտ է համապատասխանորեն զարգացնել և արդիականացնել օդային տրանսպորտի հարմարությունները և ենթակառուցվածքները: Օդանավակայանների զարգացման և արդիականացման համար ՀՀ օդանավակայաններում ընդհանուր առմամբ կատարվել են մոտավորապես 169,000,000 ԱՄՆ դոլարի ներդրումներ [14]:

ՀՀ օդային կապի ինդեքսը 2024թ.-ին 2019թ.-ի համեմատ նվազել -13%, իսկ 2023թ.-ի համեմատ աճել է + 4% -ով [15]:

Նավիգացիոն ծառայությունում 2019թ. դրամաշնորհային ֆինանսավորումը կազմել է 200,000. Եվրո [16]:

Օդային տրանսպորտի ենթակառուցվածքի որակի ցուցանիշը Համաշխարհային տնտեսական ֆորումի (WEF) կողմից ամենամյա հրապարակվող գլոբալ մրցունակության ինդեքսի բաղադրիչներից մեկն է: Այն ներկայացնում է տվյալ երկրի օդանավակայանների որակի գնահատականը՝ հիմնված WEF-ի հետազոտության տվյալների վրա: Օդային տրանսպորտի ենթակառուցվածքի որակի գնահատականը չափվում է 1-7 սանդղակով 1 (թերզարգացած) և 7 (զարգացած և արդյունավետ միջազգային չափանիշներով):

Համեմատելով օդային տրանսպորտի ենթակառուցվածքների որակը Եվրոպական երկրների հետ, Հայաստանում 2019թ., մինչ քովիդ համաճարակը, ինդեքսը կազմել է 4,60, 66 հորիզոնականում [17], իսկ 2024թ., օդային տրանսպորտի ենթակառուցվածքների որակի ինդեքսը՝ 3.05 (նկ. 5) [17]:



Նկ. 5. Օդային տրանսպորտի ենթակառուցվածքների որակը ՀՀ-ում [17]

Օդային տրանսպորտի ենթակառուցվածքների ֆինանսական ներդրումները կհանգեցնի ենթակառուցվածքների որակի բարձրացմանը և ենթակառուցվածքների զարգացմանը ՀՀ-ում:

Օդային տրանսպորտի ենթակառուցվածքների առկա խնդիրները.

1. արտաքին և ներքին խոչընդոտներ,
2. Հայաստանի օդային տրանսպորտի համալիրի մրցակցային կառուցվածք,
3. տեխնիկական կանոնակարգում և վերահսկում,
4. օդային տրանսպորտի ենթակառուցվածքներում պետական և մասնավոր համագործակցություն,
5. օդային տրանսպորտի ենթակառուցվածքների որակ,
6. օդային փոխադրումների միջազգային համաձայնագրեր, բանակցությունների վարում,
7. օդանավակայանների ցանցային կապ,
8. օդանավակայանների կարողություններ,
9. տեխնիկական հնարավորությունների շարունակական բարելավում,
10. կառավարում և պատասխանատվություն,
11. հարկեր:

Եզրակացություն: Առկա վիճակի վերլուծությունը ցույց է տալիս, որ ՀՀ օդանավակայաններում պետք է կատարվեն ներդրումներ՝ հետագա պահանջարկը բավարարելու և օդային տրանսպորտի ենթակառուցվածքների որակը և օդանավակայանների կարողություններն ապահովելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Չիբուխչյան Ս., Չիբուխչյան Գ., Իգիթկան Կ.** Օդային տրանսպորտի և ենթակառուցվածքների զարգացումը //Հայաստանում ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ.-2023.-3(87).-էջ 80:

2. info@armstat.am
3. ՀՀ կառավարության Տրանսպորտի բնագավառի բարեփոխումների ռազմավարություն.- 2019.-էջ 9:
4. Comprtitiveness of Armenia's air transport sector. - January 19, 2012.- P.13.
5. ICAO Overview of Regulatory and Industry Developments in International Air Transport. -2022.- P. 97-99.
6. ICAO List of Government-owned and Privatized Airlines. –November 2016.- P. 1-16.
7. Airoports council international the ownership of Europes airports.-2016.-P. 7-8.
8. Reason Foundation annual privatization report aviation.- May 2024.
9. European Commission Mobility and Transport the EU Air Safety List.- 2024.- P.3.
10. www.ICAO.int.
11. **Իգիթյան Կ**. Տրանսպորտային քաղաքականության ազդեցությունները օդանավակայանների ենթակառուցվածքների վրա //ՃՇՀԱՀ գիտական աշխատություններ. - 2024.- 2(89). -էջ 13-22:
12. contacts@avia-zvartnots.aerocontacts@aia-zvartnots.aero
13. www.flightconnections.com
14. Մաստր պլան «Զվարթնոց» միջազգային և Գյումրու «Շիրակ» օդանավակայանների 2018-2022թթ. -2021. –էջ 6-27:
15. ACI Benefits of Airports & Air Connectivity.- 2024.- P. 1-31.
16. European bank for Resonstruction and Development 2021.
17. Global Economy.com

К.М. ИГИТЯН

ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ РАЗВИТИЯ ИНФРАСТРУКТУРЫ ВОЗДУШНОГО ТРАНСПОРТА АРМЕНИИ

Рассмотрены современное состояние и перспективы развития инфраструктуры воздушного транспорта Армении. Представлены показатели функционирования, финансовых вложений, безопасности и качества инфраструктуры воздушного транспорта РА.

Ключевые слова: воздушный транспорт, авиакомпании, аэропорты, навигационная служба, инфраструктуры.

K.M. IGITYAN

THE MAIN TRENDS IN THE DEVELOPMENT OF ARMENIA'S AIR TRANSPORT INFRASTRUCTURE

The current state of operation and development prospects of Armenia's air transport infrastructure are considered. The indicators of operation, financial investments, safety and quality of Armenia's air transport infrastructure are presented.

Keywords: air transport, airlines, airports, navigation services, infrastructure.